Նպաստներ հաշմանդամու թյուններով երեխաների համար

Բովանդակություն

Ներածություն՝	1
Supplemental Security Income (SSI) Հավելյալ ապահովության եկամուտ	2
Social Security Disability Insurance (SSDI) նպաստներ մանկական հասակից հաշմանդամ չափահասների համար	4
SSI-ի վճարումների կամ SSDI-ի նպաստների համար դիմելը և ինչպե՞ս Դուք կարող եք օգնել՝	5
Զբաղվածության աջակցության ծրագրեր հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար՝	6
Medicaid և Medicare (բուժօգնություն և խնամք)	7
Children’s Health Insurance Program	7
Առողջապահական խնամքի այլ ծառայություններ	8
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	8

Ներածություն՝

Այս գրքույկը նախատեսված է այն 18 տարեկանից ցածր այն երեխաների ծնողների, խնամակալների և ներկայացուցիչների համար, ովքեր հաշմանդամ են, ինչը նրանց կարող է իրավունակ դարձնել Supplemental Security Income (SSI)-ի համար: Սա նաև վերաբերում է մեծահասակներին, ովքեր հաշմանդամ են դարձել մանկական հասակում (մինչև 22 տարեկանը), և ովքեր կարող են իրավասություն ունենալ Social Security Disability Insurance (SSDI)-ի նպաստների համար: (Մենք կոչում ենք այն SSDI նպաստ «մանկան» նպաստ, քանզի այն վճարվում է ծնողի Social Security եկամտի գրառումների վրա:)

Այս գրքույկը կօգնի Ձեզ որոշել, թե արդյոք Ձեր երեխան կամ Ձեզ ծանոթ երեխան իրավունակ է SSI-ի կամ Social Security-ի համար:

Supplemental Security Income (SSI) Հավելյալ ապահովության եկամուտ

SSI ամսական վճարումներ է կատարում ցածր եկամուտով և սահմանափակ հնարավորություններով անձանց, որոնք 65 տարեկան են և ավելի բարձր կամ հաշմանդամ են: Եթե Ձեր երեխան 18 տարեկանից ցածր է, նա կարող է որակավորվել, եթե ունի ֆիզիկական կամ հոգեկան խնդիրներ կամ խնդիրների համակցություն, որոնք համապատասխանում են Social Security-ի սահմանմանը մանկական հաշմանդամության վերաբերյալ, և եթե նրա եկամուտը և հնարավորությունները տեղավորվում են իրավունակության սահմաններում: SSI վճարի գումարը տարբեր է տարբեր նահանգներում, քանզի որոշ նահանգներ ավելացնում են SSI վճարի գումարի վրա: Ձեր տեղական Social Security գրասենյակը կարող է ավելին ասել Ձեր նահանգի ընդհանուր SSI վճարի գումարի մասին:

SSI կանոններն եկամուտի և հնարավորությունների մասինv

Մենք հաշվի ենք առնում Ձեր երեխայի եկամուտն ու հնարավորությունները, երբ որոշում ենք Ձեր երեխայի իրավունակությունը SSI-ի համար: Մենք հաշվի ենք առնում նաև երեխայի ընտանիքում ապրող անդամների եկամուտն ու հնարավորությունները: Այս կանոնները գործում են, եթե Ձեր երեխան ապրում է տանը: Դրանք նաև գործում են, եթե նա հեռավոր դպրոցում է սովորում և ժամանակ-առ-ժամանակ վերադառնում է տուն և գտնվում է Ձեր վերահսկողության տակ:

Եթե Ձեր երեխայի եկամուտն ու հնարավորությունները, ինչպես նաև նույն տանն ապրող ընտանիքի անդամների եկամուտն ու հնարավորությունները թույլատրված գումարից ավելի են, մենք կմերժենք երեխայի SSI վճարների համար դիմումը:

Մենք սահմանափակում ենք SSI ամսական վճարը $30-ով, եթե երեխան բժշկական հաստատությունում է, և առողջության ապահովագրությունը վճարում է նրա խնամքի համար:

SSI կանոնները հաշմանդամության վերաբերյալ

Հաշմանդամ և, հետևաբար, SSI համար իրավունակ համարվելու համար Ձեր երեխան պետք է համապատասխանի հետևյալ բոլոր պահանջներին՝

- Երեխան, որը կույր չէ, պետք է չաշխատի և չվաստակի ամսական $1,180-ից ավելի 2018թ. ընթացքում: Կույր երեխան չպետք է աշխատի կամ վաստակի ամսական $1,970-ից ավելի (Այս գումարները հիմնականում փոփոխվում են յուրաքանչյուր տարի):
- Երեխան ֆիզիկական կամ հոգեկան խնդիր ունի կամ խնդիրների համակցություն, որի հետևանքով նա ունի «նշանավոր եւ ծանր ֆունկցիոնալ սահմանափակումներ»: Սա նշանակում է, որ խնդիրը լրջորեն սահմանափակում է Ձեր երեխայի գործունեությունը:
- Երեխան պետք է հաշմանդամ լինի կամ նրա վիճակը պետք է հաշմանդամության հանգեցնի կամ ակնկալվի, որ կհանգեցնի հաշմանդամության առնվազն 12 ամիս, կամ խնդիրը պետք է ակնկալվի, որ կհանգեցնի մահվան:

Ձեր երեխայի վիճակի մասին տեղեկությունների տրամադրում

Երբ Դուք դիմում եք Ձեր երեխայի համար հաշմանդամության վրա հիմնված SSI վճարումների համար, մենք կխնդրենք Ձեզանից տրամադրել մանրամասն տեղեկություններ Ձեր երեխայի բժշկական վիճակի վերաբերյալ և թե ինչպես է այն ազդում առօրյա գործունեություն կատարելու իր կարողության վրա: Մենք կխնդրենք նաև Ձեր թույլտվությունը, որպեսզի Ձեր երեխայի վիճակի մասին տեղեկություններ ունեցող

բժիշկները, ուսուցիչները, թերապևտները և այլք մեզ տեղեկություններ ուղարկեն նրա մասին։

Եթե Դուք ունեք Ձեր երեխայի որևէ բժշկական կամ դպրոցական որևէ արձանագրություն, խնդրում ենք բերել դրանք Ձեզ հետ։ Սա կօգնի մեզ արագացնել որոշում կայացնելու գործընթացը։

Ի՞նչ կլինի հետագայում։

Մենք կուղարկենք Ձեր կողմից տրամադրված բոլոր տեղեկությունները Disability Determination Services (DDS) Ձեր նահանգի գրասենյակ։ Նահանգային գործակալության բժիշկները և աշխատակազմի այն պատրաստված աշխատակիցները կուսումնասիրեն տեղեկությունները և կխնդրեն Ձեր երեխայի բժշկական և դպրոցական արձանագրությունները, ինչպես նաև որևէ այլ տեղեկություն, որն անհրաժեշտ է որոշելու համար, թե արդյոք Ձեր երեխան համապատասխանում է հաշմանդամության մեր չափանիշներին։

Եթե նահանգային գործակալությունը չի կարող հաշմանդամության մասին որոշում կայացնել միայն բժշկական տեղեկությունների, դպրոցական տվյալների և Ձեր ունեցած այլ փաստերի հիման վրա, նրանք կարող են խնդրել Ձեզ տանել Ձեր երեխային բժշկական ստուգման կամ թեստ։ Մենք կվճարենք ստուգման կամ թեստի համար։

Մենք կարող ենք անմիջապես SSI վճարումներ կատարել Ձեր երեխայի համար

Նահանգային գործակալությանը կարող է պահանջվել երեքից մինչև հինգ ամիս Ձեր երեխայի հաշմանդամության չափանիշներին համապատասխանությունը որոշելու համար։ Սակայն, որոշ բժշկական խնդիրների դեպքում մենք անմիջապես կատարում ենք SSI վճարումները մինչև վեց ամսվա համար, մինչ նահանգային գործակալությունը որոշում է, թե արդյոք Ձեր երեխան ունի որակավորվող հաշմանդամություն։

Ահա *որոշ* պայմաններ, որոնք կարող են որակավորել՝

- Ամբողջովին կուրություն
- Ամբողջովին խլություն
- Մանկական ուղեղային կաթված
- Դաունի սինդրոմ
- Մկանային դիստրոֆիա
- Լուրջ մտավոր անաշխատունակություն (4 և ավելի տարեկան երեխա)
- Ախտանիշական ՄԻԱՎ-ի վարակ
- 2 ֆունտ 10 ունցիայից պակաս ծննդյան քաշ — Մենք գնահատում ենք մանուկների մոտ ցածր քաշը ծննդից մինչև 1 տարեկանը և քաշ հավաքելու դժվարությունները նորածինների և մանուկների մոտ ծննդից մինչև 3 տարեկանը։ Մենք օգտագործում ենք մանկան ծննդյան այն քաշը, որը նշված է նրա ծննդյան վկայականի բնօրինակում կամ դրա վկայագրված պատճենում կամ բժշկի կողմից ստորագրած բժշկական գրառումներում։

Եթե Ձեր երեխան համապատասխանում է նշված պահանջներից որևէ մեկին, ապա նա անմիջապես կսկսի ստանալ SSI-ի վճարումները։ Եթե պետական գործակալությունը արդյունքում որոշում է, որ Ձեր երեխայի հաշմանդամությունը բավարար ծանր չէ SSI-ի համար, Դուք ստիպված չեք լինելու ետ վճարել Ձեր երեխայի կողմից ստացված SSI-ի վճարները։

SSI-ի հաշմանդամության վերանայումը՝

Այն բանից հետո, երբ Ձեր երեխան սկսի ստանալ SSI, ըստ օրենքի պահանջում է, որպեսզի մենք ժամանակ-առ-ժամանակ ուսումնասիրենք Ձեր երեխայի առողջական վիճակը՝ հաստատելու համար, որ նրա հաշմանդամությունը դեռևս

համապատասխանում է մեր չափանիշներին: Մենք պետք է այս ուսումնասիրությունն անցկացնենք՝

- 18-ից ցածր տարիքի երեխաների համար, որոնց վիճակը կարող է բարելավվել, առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ, և
- Մինչև 1 տարեկան հասակը այն երեխաների համար, ովքեր ստանում են SSI վճարներ ցածր ծնողական քաշի պատճառով: Եթե մենք պարզենք, որ նրանց առողջական վիճակը չի ակնկալվում որ բարելավվի մինչև մեկ տարեկան հասակը, մենք կարող ենք ուսումնասիրությունը նշանակել հետագա ժամկետի համար:

Մենք կարող ենք հաշմանդամության ուսումնասիրություն իրականացնել անգամ այն դեպքում, երբ չի ակնկալվում, որ Ձեր երեխայի վիճակը կարող է բարելավվել: Երբ մենք իրականացնենք ուսումնասիրությունը, Դուք պետք է ապացույց ներկայացնեք, որ Ձեր երեխայի հաշմանդամությունը դեռևս լրջորեն սահմանափակում է նրա առօրյա գործունեությունը, և որ Ձեր երեխան բուժում է ստանում, որը համարվում է բժշկական տեսանկյունից անհրաժեշտ իր առողջական վիճակի համար:

Ինչ տեղի կունենա, երբ Ձեր երեխան դառնա 18 տարեկան

SSI ծրագրի համաձայն երեխան չափահաս է դառնում 18 տարեկան հասակում, և մենք օգտագործում ենք տարբեր բժշկական և ոչ-բժշկական կանոններ որոշելու համար, թե արդյոք չափահասը կարող է ստանալ SSI հաշմանդամության վճարներ: Օրինակ՝ մենք չենք հաշվարկում ընտանիքի անդամների, բացառությամբ կնոջ/ամուսնու, եկամուտը և հնարավորությունները, երբ որոշում ենք, թե արդյոք չափահասը համապատասխանում է SSI-ի ֆինանսական չափանիշներին: Մենք հաշվարկում ենք միայն չափահասի և նրա կնոջ/ամուսնու եկամուտը և հնարավորությունները: Մենք օգտագործում ենք նաև չափահասների համար հաշմանդամության կանոնները, երբ որոշում ենք կայացնում, թե արդյոք չափահասը հաշմանդամ է:

- Եթե Ձեր երեխան արդեն ստանում է SSI վճարներ, մենք պետք է ուսումնասիրենք նրա առողջական վիճակը, երբ նա դառնա 18 տարեկան: Հիմնականում մենք կատարում ենք այդ ուսումնասիրությունը Ձեր երեխայի 18 տարի լրանալուց հետո մեկ տարվա ընթացքում: Մենք կօգտագործենք չափահասի հաշմանդամության կանոնները՝ որոշելու համար, թե արդյոք Ձեր 18 տարեկանը իրավունակ է SSI-ի համար:
- Անգամ եթե Ձեր երեխան իրավունակ չէր SSI-ի համար մինչև նրա 18 տարեկան հասակը, քանզի Դուք և Ձեր ամուսինը/կինը անհրաժեշտից բարձր եկամուտ և շատ հնարավորություններ ունեիք, նա կարող է իրավունակ լինել SSI-ի համար 18 տարեկան հասակից:

Լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք *Supplemental Security Income (SSI)* (Հրատարակություն No. 05-11000-AM):

Social Security Disability Insurance (SSDI) նպաստներ մանկական հասակից հաշմանդամ չափահասների համար

SSDI ծրագիրը նպաստներ է վճարում չափահասներին, ովքեր հաշմանդամություն ունեն, որը սկսվել է մինչև նրանց 22 տարեկան դառնալը: Մենք այս SSDI նպաստը համարում ենք որպես «երեխայի» նպաստ, քանզի այն վճարվում է ծնողի Social Security եկամուտների պատմության հիման վրա:

Որպեսզի հաշմանդամ չափահասը որակավորվի “երեխայի” նպաստի համար, նրա ծնողներից մեկը՝:

- Պետք է ստանա Social Security կենսաթոշակային կամ հաշմանդամության նպաստներ, կամ

- Պետք է մահացած լինի և բավական աշխատած լինի, որպեսզի որակավորվի Social Security-ի համար:

Այս նպաստները վճարվում են նաև չափահասին, եթե 18 տարեկանում նա հաշմանդամ է և եթե նրանք ստացել են կախյալների նպաստներ ծնողների Social Security եկամուտների պատմության հիման վրա մինչև 18 տարեկան հասակը: Երեխաները, ովքեր որպես անչափահասներ նպաստներ են ստացել ծնողի Social Security եկամուտների պատմության հիման վրա, կարող են իրավունակ լինել շարունակել ստանալ նպաստները այդ ծնողի պատմության հիման վրա մինչև 18 տարեկան հասակը, եթե վերջինս հաշմանդամ է: Մենք հաշմանդամության որոշումը կկայացնենք՝ հիմնվելով չափահասների հաշմանդամության կանոնների վրա:

SSDI հաշմանդամ չափահասի «երեխայի» նպաստները կշարունակվեն այնքան ժամանակ, որքան նա կմնա հաշմանդամ: Հաշմանդամ չափահաս «երեխայի» ամուսնությունը կարող է ազդել նրա իրավունակության վրա: Ձեր երեխան ստիպված չէ աշխատել այս նպաստները ստանալու համար:

Ինչպես ենք մենք որոշում, թե արդյոք Ձեր «երեխան» հաշմանդամ է և իրավունակ է SSDI նպաստների համար

Եթե Ձեր երեխան 18 տարեկան է և ավելին, մենք կգնահատենք նրա հաշմանդամությունը նույն ձևով, ինչպես մենք գնահատում ենք չափահասի հաշմանդամությունը: Մենք դիմումը կուղարկենք Ձեր նահանգի Disability Determination Services, որը մեզ համար կորոշի հաշմանդամությունը: Չափահասների հաշմանդամությունը որոշելու մասին մանրամասն տեղեկությունների համար ընթերցեք *Disability Benefits* (Հրատարակություն No. 05-10029-AM):

SSI-ի վճարումների կամ SSDI-ի նպաստների համար դիմելը և ինչպե՞ս Դուք կարող եք օգնել՝

Դուք կարող եք SSI-ի վճարումների կամ SSDI-ի նպաստների համար դիմել Ձեր երեխայի համար՝ զանգահարելով Սոցիալական ապահովության **1-800-772-1213** անվճար հեռախոսահամարով կամ այցելելով Սոցիալական Ապահովության Ձեր տեղամասային գրասենյակ: Եթե Դուք դիմում եք Ձեր երեխայի SSI-ի վճարումների համար, ապա Ձեզ հետ պետք է ունենաք իր Սոցիալական Ապահովության համարը և ծննդյան վկայականը: Եթե Դուք դիմում եք Ձեր երեխայի SSDI-ի նպաստների համար, ապա բացի երեխայի Սոցիալական Ապահովության համարից և ծննդյան վկայականից, կխնդրենք նաև ներկայացնել Ձեր սեփական Սոցիալական Ապահովության համարը, կամ թոշակի անցած, հաշմանդամ կամ մահացած ծնողի Սոցիալական Ապահովության համարը, ում անունով, որ ներկայացվում է SSDI դիմումը:

Դուք կարող եք մեզ օգնել որոշում կայացնելու հարցում՝

- Հայտնելով մեզ Ձեր երեխայի առողջական վիճակին վերաբերող բոլոր տեղեկությունները,
- Տրամադրելով մեզ բժիշկներին և հիվանդանոցներ այցելելու ամսաթվերը, որևէ բժշկի կամ հիվանդանոցի համար հիվանդի հաշվի համարը և ցանկացած այլ տեղեկություն, որը կօգնի մեզ ստանալ Ձեր երեխայի բժշկական գրառումները, և
- Տրամադրելով մեզ Ձեզ մոտ ունեցած որևէ բժշկական գրառում կամ տեղեկություն:

ՆՇՈՒՄ: *Կարիք չկա, որպեսզի Ձեր երեխայի բժշկից խնդրեք Ձեզ տելեկատվություն տրամադրել: Մենք անմիջապես կդիմենք նրանց Ձեր երեխայի հաշմանդամության վերաբերյալ որոշում կայացնելու համար պահանջվող բոլոր տեղեկաքների կամ տեղեկատվության ստանալու համար:*

Եթե Ձեր երեխան 18 տարեկանից ցածր է և դիմում է SSI-ի համար, ապա Դուք պետք է ներկայացնեք Ձեր, ինչպես նաև Ձեր երեխայի եկամուտը և միջոցները արձանագրող փաստաթղթեր: Մենք նաև կխնդրենք Ձեզ նկարագրել, թե ինչպե՞ս է Ձեր երեխայի հաշմանդամությունը ազդում առօրյա գործողությունները կատարելու իր ունակության վրա: Դրանից բացի, մենք կխնդրենք, որպեսզի ներկայացնեք ուսուցիչների, մանկական կենտրոնի խնամողների և ընտանիքի անդամների անունները, որոնք կարող են տեղեկատվություն տրամադրել՝ Ձեր երեխայի գործառույթների վերաբերյալ: Եթե դուք ունեք որևէ դպրոցական հաշվառումներ, ապա Դուք պետք է բերեք դրանք հարցազրույցի:

Շատ համայնքներում կատարվել են հատուկ պայմանավորվածություններ բուժօգնության մատակարարների, սոցիալական ծառայությունների գործակալությունների և դպրոցների հետ՝ Ձեր երեխայի հայցին ընթացք տալու համար անհրաժեշտ ապացույցներ տրամադրելու գործընթացում մեզ օգնելու նպատակով: Այնուամենայնիվ, Ձեր համագործակցությունը տեղեկատվություն և այլ փաստաթղթեր ստանալու հարցում, մեզ կօգնի ավելի արագ ավարտելու մեր աշխատանքը:

Զբաղվածության աջակցության ծրագրեր հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար՝

Մենք ունենք բազմազան եղանակներ SSI-ի վճարումներ կամ SSDI-ի նպաստներ ստացող և աշխատելու ցանկություն ունեցող երիտասարդներին խրախուսելու համար:

SSI-ի իրավասության սահմաններում՝՝

- Երբ մենք պարզում ենք Ձեր երեխային ամսական SSI վճարը, մենք չենք հաշվում Ձեր երեխայի եկամտի մեծ մասը: Եթե Ձեր երեխայի տարիքը 22-ից պակաս է, և նա ուսանող է, ով մշտապես դպրոց է այցելում, մենք անգամ ավելի շատ եկամուտ կհանենք ամեն ամիս: 2018թ.-ին SSI-ի համար եկամուտը հաշվարկելիս՝ 22 տարեկանից ցածր հաշմանդամ ուսանողները կարող են հանել իրենց ամսական աշխատավարձից $1,820՝ տարեկան առավելագույնը $7,350-ով: Այս գումարը կարող է փոփոխվել յուրաքանչյուր տարի:
- Plan to Achieve Self-Support (PASS) միջոցով, 15 և ավելի տարիքի երեխան կարող է խնայել որոշ չափի եկամուտ և հնարավորություններ՝ կրթության, աշխատանքի և անհրաժեշտ վճարումների համար: Մենք չենք հաշվարկում խնայված գումարը, երբ պարզում ենք SSI-ի համար երեխայի եկամուտը: Մենք չենք հաշվարկում խնայված գումարը և հնարավորությունները, երբ պարզում ենք Ձեր երեխայի վճարի գումարը: PASS-ի մասին ավելին ընթերցեք ***www.socialsecurity.gov/disabilityresearch/wi/pass.htm:***
- Առողջական վիճակի պատճառող, Ձեր երեխան կարող է աշխատելու համար կարիք ունենալ որոշակի ապրանքների և ծառայությունների, ինչպիսիք են՝ անվասայլակը կամ անձնական օգնականը: Երբ պարզում ենք Ձեր երեխայի SSI վճարը, մենք Ձեր երեխայի եկամտի մեջ չենք հաշվարկելու այս ապրանքների և ծառայությունների համար վճարված ամբողջ գումարը կամ դրա մի մասը:
- 15-Ից բարձր տարիքի Ձեր երեխան կարող է օգնություն ստանալ վերականգնման և վերապատրաստման հարցում:
- Medicaid ապահովագրությունը կշարունակվի, այնքան ժամանակ, մինչև եկամուտը շարունակի մնալ որոշ գումարից ցածր:

SSDI-ի իրավասության սահմաններում՝ `

- Մինչև 22 տարեկան չափահաս հաշմանդամը կարող է ստանալ միևնույն օգնությունը վերևում նկարագրված աշխատանքի հետ կապված ծախսերի հարցում SSI երեխայի համար, ինչպես նաև օգնություն վերականգնման և վերապատրաստման հարցում:
- Նպաստի վճարումը կարող է շարունակվել այնքան ժամանակ, մինչև Դուք ներգրավված չլինեք էական աշխատանքի մեջ: 2018թ. համար, մենք կհամարենք, որ Դուք էական աշխատանք եք կատարում, եթե Ձեր ամսական եկամուտը կազմի ավելի քան $1,180 ոչ-կույր նպաստառուների համար ($1,970, եթե Դուք կույր եք):

Դուք կարող եք հավելյալ տեղեկություններ ստանալ այս ծրագիրերի մասին մեր կայքից՝ ***www.segurosocial.gov***, զանգահարելով **1-800-772-1213**, անվճար հեռախոսահամարով կամ կարդալով ***www.socialsecurity.gov/redbook/***.

Medicaid և Medicare (բուժօգնություն և խնամք)

Medicaid առողջապահական խնամքի ծրագիր է ցածր եկամուտ և սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց համար: Նահանգներից մեծ մասում SSI վճարներ ստավող երեխաները որակավորվում են Medicaid-ի համար: Շատ նահանգներում Medicaid ավտոմատ կերպով գալիս է SSI իրավունակության հետ: Այլ նահանգներում Դուք պետք է գրանցվեք դրա համար: Որոշ երեխաներ կարող են ստանալ Medicaid ապահովագրություն անգամ եթե նրանք չեն որակավորվում SSI-ի համար: Լրացուցիչ տեղեկությունների համար ստուգեք Social Security Ձեր տեղական գրասենյակ, Ձեր նահանգի Medicaid գրասենյակ կամ Ձեր նահանգի կամ վարչաշրջանի սոցիալական ծառայությունների գրասենյակ:

Medicare դաշնային առողջության ապահովագրության ծրագիր է 65 և ավելի տարիքի անձանց համար և այն անձանց, ովքեր առնվազն երկու տարի ստանում են Social Security հաշմանդամության նպաստներ:

Կան այս կանոնի երկու բացառություններ: Ձեր հաշմանդամ չափահաս երեխան կարող է անմիջապես ստանալ Medicare, եթե նա՝

- Ունի խրոնիկ երիկամային հիվանդություն և երիկամային փոխպատվաստանյութի կամ պահպանողական դիալիզի կարիք; կամ
- Ունի Լու Գեհրիգի հիվանդություն (երկրորդային ամիոտրոֆիկ սկլերոզ):

Children's Health Insurance Program

Children's Health Insurance Program-ը թույլ է տալիս նահանգներին տրամադրել առողջության ապահովագրության աշխատող ընտանիքի երեխաներին, ում եկամուտը բարձր է Medicaid համար որակավորվելու համար, սակայն չափազանց ցածր է մասնավոր առողջության ապահովագրություն ձեռք բերելու համար: Ծրագիրը ապահովագրություն է տրամադրում դեղատոմսով դեղերի, տեսողության, լսողության և հոգեկան առողջության ծառայությունների համար, և այն մատչելի է բոլոր 50 նահանգներում և Կոլումբիայի շրջանում: Ձեր նահանգի Medicaid գործակալությունը կարող է լրացուցիչ տեղեկություններ տրամադրել այս ծրագրի վերաբերյալ, կամ Դուք կարող եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ Ձեր երեխաների ապահովագրության վերաբերյալ ***www.insurekidsnow.gov*** հասցեով կամ զանգահարելով **1-877-543-7669** հեռախոսահամարով:

Առողջապահական խնամքի այլ ծառայություններ

Երբ Ձեր երեխան SSI է տանում, մենք Ձեզ ուղեգիր կտանք դեպի այն վայրեր, որտեղ կարող եք առողջապահական խնամքի ծառայություններ ստանալ Ձեր երեխայի համար: Այս ծառայությունները տրամադրվում են համաձայն Social Security Act-ի Հատուկ առողջապահական խնամքի կարիքներ ունեցող երեխաների դրույթի ներքո: Հիմնականում նահանգային առողջապահական գործակալություններն են կառավարում այս ծրագիրը:

Նահանգներն այս ծառայություններին տալիս են տարբեր անվանումներ, ներառյալ՝ Երեխաների հատուկ առողջության ծառայություններ, Երեխաների բժշկական ծառայություններ և Հաշմանդամ երեխաների ծրագիր: Ծրագրերի մեծ մասը ծառայություններ է տրամադրում կլինիկաների, մասնավոր գրասենյակների, հիվանդանոցում գտնվող ամբուլատոր և ստացիոնար բուժման կենտրոնների կամ համայնքային գործակալությունների միջոցով:

Անգամ եթե Ձեր երեխան SSI չի ստանում, այս ծրագրերից մեկը հնարավոր է, որ կարողանա օգնել Ձեզ: Տեղական առողջապահության բաժանմունքները, սոցիալական ծառայությունների գրասենյակները կամ հիվանդանոցները պետք է կարողանան օգնել Ձեզ կապվել Ձեր տեղական Հատուկ առողջապահական խնամք պահանջող երեխաների ծրագրի հետ:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ

նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:

Securing today and tomorrow

Social Security Administration
Publication No. 05-10026-AM | January 2018
Նպաստներ հաշմանդամու թյուններով երեխաների համար
Benefits For Children With Disabilities (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: